

աշխարհի պատուիրած է իւր աշակերտացը ըսելով. «Սիրեցէք զմիմեանս» : Այս խօսքիս ապացոյց թող լինի այն ատենախօսութիւնը՝ որ ըրաւ 1847-ին : Այն շրջաբերականին մէջ այս խօսքս ըստւած է բառ առ բառ. «Դեռ շատ ատեն չէ — եւ ես այս բանս սոսկալով կ'իշխեմ — մարդիկ գտնուեցան որ մեր աշուհը եւ առաքելական աստիճանը անարգեցին՝ այնպէս ձեւացնելով որ իբր թէ մենք ալ մասնակից եմք իրենց յիմարութեանը, եւ յորդորիչ եմք իրենց ամբարշտական կարծեացը : Նոքա տեսնելով մէկ քանի կարգադրութիւններ որ եկեղեցական նահանգաց քաղաքական բարեկարգութեանը համար եղան, եւ որոց մէջ ամենեւին հաւատոյ դէմ բան չկար, խելքերնին փչեց անկից մակաբերելու որ իբր թէ մենք հաւասար աչքով կ'նայիմք ամէն տեսակ կարգի մարդկանց վրայ. որ իբր թէ մենք ոչ միայն եկեղեցւոյ որդիքը, այլ եւ օտարները՝ որքան ալ հեռու կեցած լինին կաթոլիկ եկեղեցիէն՝ յաւիտենական կենաց մասնակից լինելու կարողացողներուն կարգը կ'զնեմք : Այնչափ կ'սոսկամք մենք այս խօսքէն որ չըգիտեմք թէ ինչպէս բացատրեմք մեր զը-

ղուանքը այսպիսի ծանր նախատինքէ որ կընեն մեզի» : Ինչ սարսափելի յանցանք է եղեր մտածելը թէ Պիոս Թ յաւիտենական կենաց ժառանգորդ կճանչնայ նաեւ կաթոլիկ չեղողները : Գիտուն մարդուն մէկը այս խօսքերը կարգալով ըսած է օրագրի մը մէջ ամենայն իրաւամբ. «Այն մարդն որ հաւատոյ կողմանէ խաւարային նախապաշարման տեղիք կուտայ, քաղաքականութեան մէջ եւս չկրնար ոչ միայն ազատօրէն գործել, այլ եւ ոչ ազատական մտածութիւն ունենալ» : Այս խօսքերը բոլորովին արգարացան. վասն զի տարիէ մը ետքը Պիոս Թ կատաղի թշնամի երեւցաւ ամենայն քաղաքական յառաջագիւժութեան, եւ վերոյիշեալ ատենախօսութեան մէջ յիշուած կարգադրութիւնները՝ որ ինքը ամենահարկաւոր ճանչցած էր, եւ ըրած էր իւր երկրին քաղաքական բարեկարգութեանը համար, դատապարտեց իբրեւ յեղափոխական նորասիրութիւններ, եւ պապական իշխանութեան նորէն հաստատուելէն ետքը ոչնչացուց : Անոր համար ալ է որ պապին տէրութեան մէջ ուրիշ ամէն ժամանակներէ աւելի շատցեր են աղքատներ, ծոյլեր, անըզգամներ, անպիտաններ եւ աւազակներ» :

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ

ԹԻՖԼԻԶ.

Աշխարհիս մէջ երէ կան այնպիսի քաղաքներ՝ ուր Հայք իրենց բազմամարդութեանը հետ ամէն տեսակ ճոխութեամբ ետ չեն մնար ոչ մէկ ազգէ, անոնց մէջ նախադաս համարելու է Թիֆլիզը՝ Ռուսաստանի Կովկասեան բաժնին մէջ, ինչպէս Կոստանդնուպոլիսը Տաճկաստանի մէջ :

Թիֆլիզ քեան ի սկզբանէ երեսելի քաղաք մը եղան՝ իւր կեդրոնական տեղւոյն դրութեամբը, բայց այս վերջին դարուս մէջ այնպէս աճեցաւ եւ զօրացաւ որ նորա ամսական քաղաքիս ուրիշ քաղաքաց տարեկանն ասելի է. եւ ինչպէս կ'զրէ Թուփորով ուսումնապետը, Թիֆլիզը կ'աճի ոչ թէ տարուէ տարի կամ ամսէ ամիս, այլ օրէ օր եւ ժամէ ժամ :

Այս քաղաքիս բերդին շինութիւնը եղեր է 379 բուսականին, եւ ինչպէս կ'զրեն Վրաց պատմագիրները՝ Վախրանկ եւ Վախուշթ, 455 բուսականին ալ, երբ Վրաց բլեշիւր Վախրանկ Գուրգասւան տիրապետեց Մակրելի եւ Ապխազի երկիրներուն՝ շինեց այս քաղաքը : Աշխարհագրական դրութիւնն է 41° աստիճան եւ 4' հիւսիսային լայնութեան, 62° եւ 30' արեւելեան երկայնութեան : Անունը առած է այն տաք ջերմուկներէն որ ցայսօր կան, վասն զի Տիֆլիզ կամ Թպիլիզ տաք (ջուր) ըսել է վրացերէն, եւ Հայք աւելց առած՝ կանուսնէին Տիֆլիս : Քաղաքիս տեղւոյն յարմարութիւնը եւ հիմնարկութեան ժամանակը պատճառ եղան

շատ անգամ անոր ձեռք ձեռք անցնելուն, որովհետև այն դարերու լեռնական ազգերը, սահմանակից տերութիւնները եւ Եւրոպացիք անգամ, որ յարմար ճանապարհ կճանչնային Թիֆլիզը Ասիոյ հետ հաղորդակցութեան, նախանձնի բրին գայն: Նոցա մեկգմէկ հալածելով այս քաղաքը պատերազմի բեատրոն մը ձեռացած էր, ուստի եւ տեսարան եղած էր զանազան փոփոխութեանց ծեսերու եւ կրօնից:

Քրիստոնեական հաւատքը բեռն չորրորդ դարուն սկիզբը տարածեցաւ Վրաստանի մէջ՝ Նուսէ կոստին քարոզութեամբը՝ որ սրբոց Հովսիսիմեանց ընկերներէն մէկն էր, բայց 379-ին հալածանաց տակ ընկաւ մինչեւ 620 բռնակալներ, մինչեւ որ Յունաց Հերակլ կայսրը առաւ Թիֆլիզը եւ նորոգեց գայն: 751-ին Օմար կրկին հաստատեց այն տեղ մահմետականութիւնը: 830-ին իսպառ աւերակ դարձաւ: Բագրատունիք այն ժամանակները երկրորդ անգամ առին քաղաքը եւ միացուցին Հայաստանի հետ: Յետ այնորիկ Խալի որդի եզիտի, Արաբացոց խալիֆաներուն զօրքով յափշտակեց: 842-ին Բագրատ Ա նորոգեց Վրաց բազաւորութիւնը: Սարակինոսները կործանեցին Թիֆլիզ, եւ այնուհետեւ կրկին խաղալիկ դարձաւ Վրաց եւ Պարսից ձեռքը: Հագիւ բէ փոքր ինչ ոտքի կայնած էր, Ջալալ-էտ-տին շահը դարձեալ հիմնադրեալ ըրաւ, եւ Սիւնի կեղեցիկ ըսուած մայր եկեղեցին աւերակ դարձուց:

Թիֆլիզն ու Վրաստանը աւելի ալ քանդեց Լանկրամուրը (Թիմուրլէնկ) եւ բոլոր վանքերն ու եկեղեցիները մոխիր դարձուց: Եւտոյ 1578-ին Պարսիկներն ու Օսմանցիք բաժնեցին իրենց մէջ Վրաստանը, եւ Թիֆլիզն ընկաւ Թուրքաց բաժին: 1597-ին Շահ-Աբաս առաւ եւ այն բաժինը, եւ Թիֆլիզը բէ եւ 1724-ին Օսմանեանք սաստիկ յարձակմամբ ու մեծ զօրքով ետ առին, բայց հագիւ տասներմէկ տարի տիրեցին անոր, եւ նորէն յանձնուեցաւ Նատրը-Շահին:

Հերակլ Բ Կախերի բազաւորը յաջող պատերազմով հալածեց Պարսիկները Վրաստանէն, արօժը փոխադրեց Թիֆլիզ, եւ անուանեցաւ բազաւոր Վրաստանի: Նատրշահը 1783-ին Վրաց բազաւոր նստեցուց Թէյմուրազը, որոյ որդին Հերակլ Վրաստանի հետ միացուց Բարբլաց եւ Կախերի երկիրները: շատ բարեկարգութիւններ ըրաւ, Վալսրանկին տպագրատունը բացաւ, որ եօթանասուն տարիէ ի վեր փակուած էր, շինեց փողերանոց եւ զինարան եւ կանոնաւոր զօրքեր հաստատեց:

Թիֆլիզու կործանումը աւելի սոսկալի եղաւ 1795-ին, երբ Աղա-Մահմուտ խան անխնայ յարձակեցաւ վրան, եւ իսպառ հիմնադրեալ ընելով՝ գերի տարաւ շատ մարդիկ, եւ աւելի կանայք: Այն անգութ բռնաւորը եկեղեցեաց մէջ անգամ արիւնհեղութիւններ ըրաւ: Սպանելոց մէջ էր

ականաւոր ազգային երգիչ *Խալիխ-ժառայ Սաշեար-Նուֆալն*, որ վերջին կեանքը կրօնաւորութեան էր նուիրած:

Քաղաքին անցեալ մեծամեծ շինութիւններուն եւ փառացը վկայք մնացին միայն հոյակապ եկեղեցիք եւ երկու բերդերուն աւերակները:

Հայք մշտնջենական բնակութիւն ունէին ի վաղուց անտի այս քաղաքը. մահաւանդ Անի քաղաքին աւերմանէն ետքը, երբ Հայոց մէկ մասն ալ դիմեց Վրաստան, շատերը իրենց իշխանական ազգային արտօնութիւններով մարդասիրութեամբ ընդունուեցան Թիֆլիզ, եւ Վրաց բազաւորներուն առաջին պաշտօնները առնելով՝ Վրաստանին բարեկարգութեանը պատճառ եղան, եւ մեծամեծ կալուածոց տէր. եւ նոցա սերունդը մինչեւ ցայսօր Թիֆլիզու մէջ անդորր խաղաղութիւն կվայելն Ռուսաց Տերութեան հովանաւորութեանը ներքեւ:

Հնագոյն եկեղեցիներուն մէջ երեսելի են Հայոց եկեղեցիները: *Կարուղիկէ սուրբ Աստուածածին*, երբեմն Առաջնորդարան Հաղբատայ, շինուած է 1037 բռնակալին: *Սուրբ Կարապետ* 1400-ին: *Վանքի հին եկեղեցին* զանգակատունով 1480-ին, որ Առաջնորդարան էր սրբոյ Էջմիածնի, եւ անոր մօտը շինուեցաւ 1801-ին Վանքի Առաջնորդանիստ մայր եկեղեցին: *Հրեշտակապետ*՝ ժամանակակից առաջնոյն: *Բերդեհէմ*՝ հիմնեալ 1500-ին, եւ նորոգեալ 1740-ին: *Մուղնի սուրբ Գեորգ*՝ ժամանակակից սուրբ *Կարապետի*, որոյ մօտը *միւս Մուղնի* 1584-ին շինած: *Քարալիի սուրբ Գեորգ* 1600-ին: *Կուսաստան*՝ յանուն սրբոյն Ստեփանոսի՝ 1717-ին. *Խօնեվանք* 1760-ին. այս երկուքն ալ Բեհրութեան իշխանաց նախնեացը շինածն է: *Սուրբ Սարգիս*, *Ջիրաշէն*, *Սուրբ Նշան*, *Սասախի*, *Ջրկիւնեանց*, *Գամօյեանց* եւ *Ծիրանաւոր*, փէ եւ փճ դարերուն շինուած:

Վրաց եկեղեցիներուն մէջ ականաւոր է *Մետեխը*. որոյ շինութիւնը՝ ինչպէս յիշեցինք՝ քաղաքին ժամանակակից է, ուր բաղուած է Վրաց բազաւորն Շուշան՝ Մեծին Վարդանայ Մամիկոնեանց աղջիկը, որ նահատակուեցաւ իւր ամուսնոյն հրամանաւ՝ քրիստոնեական հաւատը չօրանալուն համար: Սորա նահատակութեան տեղն է փոքրիկ մատուռ՝ բերդի լեռան ստորոտը՝ կամուրջին առաջը: *Անյիսխաթ* (անձեռագործ դաստառակ) փէ դարու. *Սիւն* մայր եկեղեցին, որ քանի մը անգամ նորոգուած է: Հին բերդին մէջ կան ցայսօր հին ատրուշանից կամ կրակատանց աւերակներ:

Քաղաքին տեսարանը շատ գեղեցիկ է եւ զարդարուն՝ եկեղեցեաց կաթողիկէներովը եւ զանգակատուններովը, բազմաթիւ եւ կրկնաթիւ մաքուր շինուածքներով եւ ծառազարդ այգիներով, Կուր գետին երկու կողմէն դաշտային դիրքէն դէպ ի լեռները բարձրացած: Հին մասին փողոց-

ները բեպետ ամենն ալ արձակ եւ ուղիղ չեն, բայց նորերը ընդարձակութեան հետ զեղեցիկ տեսք եւս ունին, եւ ըստ մասին մաքուր սաւայատակ: Քաղաքը երկու կրածանէ Կուր գետը, որոյ մի կողմը ատենով երեք մասն կրածնէր, բայց այժմ իւր 6 հազարի չափ քառակուսի մղոն տարածութեանը վերայ կրածանի զանազան բաղեր (մասեր) որ են *Սեյդապատ, Հին քաղաք, Տափիրադ, Դարեքուրան, Սոյոյակ, Հաւաքար, Կուկիա, Չուդուրեք, Կալօններ, Նաւրուխ, Շամի գիւղ, Օրբու ճաւա, Դրսի ճաւա, Հաւ ճաւա, Կրծանիս եւ Հարքուխ*:

Քաղաքին հին մասին շինութիւնը աւելի խեղդուած լինելով, իւր տաք ամառներուն հետ ծանր օդ պէտք էր ունենար՝ երբ Կուր գետը մեջէն անցնելով ջմաքերէ զայն. ուստի աւելի կարելի է առողջարար համարել օդը:

Բնակիչքը առ հասարակ զուարթ եւ ուրախ են, առողջ եւ բարեկամ. կսիրեն ծանր աշխատութիւն, եւ միանգամայն զրօսանք եւ զուարճալի կեանք: Նոցա սեղանը միշտ զարդարած է ընտիր զինիով, եւ կվայելեն երգելով եւ պարելով. այս այն երկրին բնական է: Վարսուն հագարեն աւելի է բնակչաց բիւր, կարելի է այնքան ալ օտարական համարել. ասոնց կեսն աւելին Հայք են, եւ 1500-ի չափ ազնուականք կան: Հասարակ ժողովուրդը երկու կարգ կրածանի. *Մօքարաքի*, որ Վրաց բառ է, եւ կնշանակէ *Քաղաքացի*, եւ *Ախալփօսուլի*՝ այսինքն *նորնկ*:

Հայք ունին 28 եկեղեցիք: Ուրսուսի չափ համարուեալ տութիւն (*համքնար*) կհամարուին, եւ կկառավարուին իրենց հին կանոններովը որ այս վերջին տարիներս նորեն հաստատուեցան Կայսերական ստորագրութեամբ: Ուրսուսի չափ զործարաններ կան եւ հինգ հարիւրի չափ պանդոկներ: Վարձաւոր սալեր ուրբհարիւր. ջրհորներ մինչեւ հինգհարիւր, բաղանիքներ՝ տասնէն աւելի. քարաշէն եւ աղիւսաշէն արքունի եւ հասարակաց շինութեանք ուր հազարեն աւելի: Ասոնց մէջ հնագոյն է փոխարքային տունը եւ Ներսիսեան ձեմարանը: Իսկ նորերուն մէջ Ռուսաց ձեմարանը, Արծրունայն երկու քարվանսարայները, Թամաշեանց քարվանսարայն, որոյ մէջն է մեծ բեատրոնը. Արշակունայն տունը իւր եւրոպական եւ ասիական տեսքովը եւ զարդերովը, եւ այլ շատեր: Քանի մը տարի առաջ Վրաց բազաւորական պալատին եւ փողերանոցին աւերակներն ալ կերեւնային:

Կուր գետի վրայի ջրոս կամուրջներուն մէջ ականաւոր է Միխայլովսին եւ Մնացականեանինը, յաւերժական յիշատակք անուանց Քենեզ Վորոնցովի եւ Ադա Յովհաննու Մնացականեանց: Քսանի չափ զանազան Դպրոցներ կան, որոց մէջ ականաւոր է Ներսիսեանը՝ հիմնեալ 1822-ին. Սեմինարիայն Ռուսաց՝ 1823-ին, Կիմնագեայն՝ 1830-ին. Դպրոցն Լուսերականաց՝ 1834-ին. Ինսքիբուր օրիորդաց

1840-ին. Կրքարան օրիորդաց յանուն սրբուհայն Նունեայ՝ 1846-ին: Տպագրատանց մէջ երեքն են Հայոց:

1836-էն հաստատուեցաւ այս տեղ ազգային Հոգեւոր Կառավարութեան տեղ՝ Վրաստանի եւ Իմերեթի Հայոց Վիճակային Կոնսիստորիա:

Այս քաղաքի ժողովրդոց քաղաքականութիւնը, լուսաւորութիւնը եւ ընդարձակ վաճառականութիւնը առաջինն է Կովկասեան եւ Անդրկովկասեան քաղաքաց մէջ: Նորա լուսաւորեալ մասին ընթացքը որքան որ եւրոպականին յարմարելու ջանք ունի, այնքան ալ տեղական է, ըստ որում Թիֆլիզցիին նախապատիւ կհամարի իւր սովորութիւնը, ապրուստի եւ հագուստի տեսակը, եւ օտարաց առջեւը այնպէս կփայլեցնէ որ նոցա նախանձելի կընէ իւր նահապետական ազգային կեանքը:

Թիֆլիզը մինչեւ 1845 բիւր մայրաքաղաք էր Կուսակալութեան Վրաստանի եւ Իմերեթի: Երբ 1845-ին առաջին Փոխարքայ նստաւ այնտեղ Քենեզ Վորոնցով, հինգ կուսակալութիւն բաժանեցաւ Վրաստանը Կովկասին հետ. եւ այնուհետեւ Թիֆլիզ եղաւ բնակութիւն Կովկասեան Փոխարքայից, եւ բազմացան բարձր դատարաններ, եւ աւելի 1857-ին, երբ քանի մը նախարարութեանց Բաժինները (*Տեփարքամէր*) բացուեցան Թիֆլիզ: Այժմ Թիֆլիզու մէջ կանտի Փոխարքայ Կովկասու Մեծ Իշխանն Միքայէլ Նիքոլայեւիչ, որ մեծամեծ յաղթութիւններով նուաճելով Կովկասի բոլոր լեռնականաց մասը՝ աւելի ընդարձակեց Կովկասը: Թիֆլիզի Փոխարքայութիւնը կիշխէ եօթն Նահանգաց Կուսակալութեան, այսինքն Թիֆլիզու, Քուրայիսի, Երեւանայ, Շամախույ, Դարբանդի եւ Սրաւրփոլի. նոյնպէս եւ իշխանութեան Մնկրէլի, եւ նոր հպատակեալ Չեչենստանի եւ Տաղստանի: Եւ այսպէս Թիֆլիզի մէջ կան այժմ հետեւեալ իրաւարանք, դատատնատեղիք կամ զործակալութիւնք: Գլխաւոր կառավարութիւն Փոխարքային Կովկասու, որ կրածանի հինգ բաժին. ա) Բաժին ընդհանուր զործոց, բ) Դատատնական զործոց, գ) Դանձուց, զ) Արքունի կալուածոց, եւ ճ) Հաշուատեսութեան, որոց հետ եւս միացեալ կհամարուին պէսպէս Դիւաններ եւ դատատնանարաններ:

Այս ամենայն դիւանատեղեաց մէջ շատ Հայք կգտնուին զանազան պարտաւորութեան մէջ, եւ իւրեանց հաւատարիմ եւ զործունեայ պաշտօնատարութեամբը կվայելն Տեւութեան շնորհքը: Իսկ վաճառականութիւնը եւ արուեստները զրեք բոլորովին Հայոց հասարակութեան ձեռքն են: Հայոց երկտասարդք մեծ եռանդն ունին նաեւ ուսումնասիրութեան մէջ եւ ազգային բարոյական յառաջադիմութեան. հայերէն օրագիրներ կհրատարակեն եւ ունին ազգային ժամանակաւոր բեատրոն:

Թիֆլիզու հին հայկազն ցեղապետութեանց մէջ երեւելի են իշխանական գերդաստանք Բենրոտեանց, Թումանեանց, Արդուբեանց, Մելիքեանց, Արա-Մելիքեանց, Լօռու-Մելիքեանց, Արարեկեանց, Ամատունեանց, Ենակուլփեանց, Սմբատեանց, Նազարեանց եւ այլն: Վրացի իշխանազանց մէջ ալ շատ կան որ ծագած են Հայոց ցեղերէ, զոր օրինակ Թումանովներ, Մելիքովներ, Բագրատիւններ, Անդրոնիկովներ, Օրբեկեանք, Սմբատովներն եւ այլք:

Քաղաքիս վաճառականութիւնն այնքան ընդարձակ է որ Կովկասի բոլոր քաղաքները կապուած են նորա հետ. միջնորդ է նաեւ Պարսկաստանի վաճառականութեանը

Եւրոպիոյ հետ: Թիֆլիզէն կլուղարկուին նաեւ բոլոր Կովկասեան բերքերը, որոց մէջ անուանի է Կախէրի գինին, Ղարաբաղու մետաքսը, Երեւանայ բամպակը, բրինձը, Կողրի աղը, Պաքուի նաւթը եւ այլ շատ տեսակ բերքեր, նմանապէս եւ արհեստաւորաց ձեռագործերը:

Յանկալի է Ազգին այս քաղաքիս բարերադր վիճակը, եւ յուսալի է որ Թիֆլիզու յառաջադիմութեանը հետ նաեւ բոլոր Ռուսաստանի Հայք օր աւուր մեծամեծ յառաջադիմութիւններ ունենան ամեն բանի մէջ:

ԱԻԱԳ ՔԱԼ. Յ. ՍՈՒՐԵՆԵԱՆՅ.

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ.

ԹԻՖԼԻԶՈՒ ԲՇԱԿԻՉՆԵՐԸ.

Թիֆլիզու «Կովկաս» Լրագրին 16 բուռն մէջ՝ Թիֆլիզու բնակչաց վրայ այս ցուցակը դրուած է.

Քաղաքին բոլոր բնակչաց թիւն է 60,083. 33,433-ը արական սեռի եւ 26,652-ը իգական:

Սոքա ըստ ազգութեան այսպէս համրուած են.

	Արու.	Էգ.
Ռուս	6,963.	5,497.
Լեհացի	622.	327.
Վրացի	8,283.	6,595.
Հայ	15,268.	13,136.
Թաթար	649.	307.
Պարսիկ	508.	21.
Գաղղիացի	106.	66.
Գերմանացի	578.	54.
Իտալացի	74.	45.
Անգղիացի	8.	16.
Սպանիացի	1.	—
Զուիցերացի	—	1.
Սըրֆ կամ Սերվիացի	2.	1.
Յոյն	61.	58.
Հրեայ	226.	201.

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՍՈՎՆ ՈՒ ՓՈԹՈՐԻԿԸ.

Անցած տարւոյն վերջերը երկու սարսափելի դժբաղդութիւններ Հնդկաստանի մէկ մասը ետքի աստիճանի խեղճութեան մէջ ձգեցին, այսինքն սով ու փոքորիկ. եւ քեպէտ փոքորիկը դադրեցաւ, վասն զի երկար քշելու բան չէր, բայց սովը տիրած է, եւ ասոր պատճառ այն է որ քանի

որ Ամերիկայի պատերազմին պատճառաւ բամպակ քանկցաւ, Անգղիոյ ու Եւրոպայի ամեն կողմերէն այնքան ոսկի եւ արծաթ տարուեցաւ Հնդկաստան՝ այնտեղի բամպակը առնելու. համար որ իրաւունք ունին լրագիրներն ըսելու թէ տեղացիք այժմ ոսկիի մէջ կլոյան. ոսկին զրեթէ զին չունի. ցորենն ու բրինձը այնպէս բանկցեր են որ ոսկիէն աւելի արժէք ունին, եւ դարձեալ չեն գտնուիր, այնպէս որ հազարաւոր մարդիկ քաղցած կմեռնին: Այս ալ մէկ նոր ապացոյց է թէ երբոր մէկ երկիր մը դրսէն ապրանք առնելու տեղը ստակ միայն կառնու, այն երկիրը անպատճառ կքանդուի եւ ժողովուրդը կվճանայ:

Երկրորդ դժբաղդութիւնը փոքորիկն էր ըսինք: Այսպիսի փորձանքները սովորաբար չափէ դուրս կմեծցուին լրագիրներուն մէջ. ափսոս որ այս բանիս մէջ հակառակը պատահեր է: Առաջ լսուած էր թէ Հնդկաստանի Մազուլիփարամ քաղաքը ծովուն բարձրանալովը եւ փոքորիկին սաստկութեամբ քանդուեր է ու 20,000 մարդ խղդուեր են. այժմ ստոյգ տեղեկութիւններէ կտեսնուի որ անցեալ Նոյեմբերի 1-ին զիշերը մէկ ժամուան մէջ 60,000 հոգիէն աւելի խղդուեր են ջրերուն մէջ եւ քաղուեր են քաղաքներուն ու գեղերուն աւերակաց տակը: Սաւկոն կղզին 8,200 բնակիչ ունի եղեր. ասոնցմէ 7,000-ը մէկ ժամուան մէջ քշեր տարեր են ջրերը իրենց տներովն ու տընակներովը: Մազուլիփարամ քաղաքը *Քիսրնա* ըսուած գետին բերանը շինուած է ցած կղզիի մը վրայ:

Ծովուն վրայի փոքորիկը զիշերուան 10-ին կսկսի. քաղաքին փողոցները սոսկալի մութ կկոխէ, անոր ետեւէն ծովուն ալիքները ահագին գոռում գոչումով մինչեւ 20, 30 ոտնաչափ սովորականէն աւելի բարձրացած՝ քանի մը վայրկենի մէջ կկոխեն քաղաքը եւ տներուն ու բնակիչնե-